

ՀԱՅ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Աղասյան Ա. (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Հայաստան)

instart@sci.am

Բանալի բառեր՝ արևմտահայ կերպարվեստ, Օսմանյան կայսրություն, քանդակագործություն, հուշարձան, դիմաքանդակ, դեկորատիվ քանդակ:

Նոր շրջանի արևմտահայ կերպարվեստը, ի տարբերություն արևելահայ կերպարվեստի, բավարար չափով ուսումնասիրված չի, թեև վերջերս Ստամբուլում թուրքերեն և անգլերեն լեզուներով լույս տեսած Գարո Քյուրքմանի՝ 1600-1923 թթ. Օսմանյան կայսրության մեջ ծնված հայ վարպետներին ներկայացնող երկհատոր պատկերագրի շնորհիվ հնարավոր դարձավ ընդլայնել մեր գիտելիքները տվյալ շրջանի, մասնավորապես XIX դարի արևմտահայ կերպարվեստի մասին:

Արևելահայ նոր կերպարվեստի համեմատությամբ, արևմտահայ կերպարվեստում այդ ժամանակ տեղի ունեցած բարեփոխումներն ընթացել են ավելի դանդաղ, չեն կրել նույնքան խոր, արմատական բնույթ: Միայն այսպես կոչված «թանգիմաթի»՝ քաղաքական և տնտեսական ճգնաժամ ապրող Օսմանյան Թուրքիային եվրոպական երկրների պարտադրած բարենորոգման շրջանում, երբ որոշակի աշխուժանում է արևմտահայ բնակչության ոչ միայն հասարակական, այլև մշակութային կյանքը, աստիճանաբար գիտակցվում է կերպարվեստի՝ նկարչության ու քանդակագործության ինչպես լուսավորական, այնպես էլ գեղագիտական նշանակությունը:

Արևմտահայ քանդակագործության հիմնադիրներից էր Երվանդ Ոսկանը (1855-1914), որը նաև թուրք առաջին արձանագործներ Իհսան Օզսոյի, Իսա Բեհգատի, Մահի Թոմրուկի և այլոց ուսուցիչն էր: Կ. Պոլսում, ապա Վենետիկում նախնական կրթություն ստանալուց հետո

նա հինգ տարի սովորել է Հռոմի Գեղարվեստի ակադեմիայում, կատարելագործվել՝ Փարիզում: 1881-ին, վերադառնալով Կ. Պոլիս, նշանակվել է Հնագիտության թանգարանի փորձագետ, իսկ 1883-ից ի վեր վարել է Օսմանյան Գեղարվեստից վարժարանի ներքին տեսուչի ու փոխտնօրենի պաշտոնները: Թեպետ մանկավարժական աշխատանքը նրանից շատ ժամանակ է խլել, այնուհանդերձ, Ե. Ոսկանը գեղարվեստական մեծ ժառանգություն է թողել: Նրա լավագույն աշխատանքներից են եղբոր՝ Տիգրան Ոսկանի, ֆրանսիացի հասարակական գործիչ, լրագրող Պիեռ Քիյառի, կոմպոզիտոր Տիգրան Չուխաճյանի, Կ. Պոլսի Հնագիտության թանգարանի և Գեղարվեստից վարժարանի տնօրեն Օսման Համդի բեյի դիմաքանդակներն ու կիսանդրիները, ինչպես նաև «Զեյթեկի պարը» և «Զեյթեկի կինը» կավե փոքրաչափ արձանները:

Նույն տարիներին է հանդես եկել արևմտահայ քանդակագործ, ծնունդով մշեցի Հայկ Բադիկյանը (1876-1950): 1891-ին նա մեկնել է ԱՄՆ, ուր և անցել է նրա ստեղծագործական բեղմնավոր կյանքը: Հ. Բադիկյանի առավել նշանակալից աշխատանքը Սան Ֆրանցիսկոյի հրապարակներից մեկում տեղադրված՝ Աբրահամ Լինքոլնի հուշարձանն է (1926), որը բարձր է գնահատվել քննադատների կողմից:

Հիմնականում ԱՄՆ-ում է աշխատել նաև Զմյուռնիայում ծնված Հակոբ Փափազյանը (1878-1957): Վենետիկի և Հռոմի Գեղարվեստի ակադեմիաներում կրթվելուց հետո նա վերադարձել է հայրենիք, ուր բազմաթիվ դիմաքանդակներ և թեմատիկ քանդակներ է կերտել: 1922-ին հայերի հերթական ջարդերից մի կերպ փրկված արվեստագետը Զմյուռնիայում է թողել իր ստեղծագործություններից շատերն ու հասել Նյու Յորք: Հետագայում նա այստեղ արվեստանոց է բացել և բավականին լայն ճանաչում գտել:

Արևմտահայ այլ քանդակագործների վերաբերյալ

տեղեկությունները սակավաթիվ են: Զմյուռնիայում ծնված, Իտալիայում և Փարիզի գեղարվեստական ուսումնարանում սովորած Հակոբ Արապյանի (1867-1910-ից հետո) մասին գիտենք, որ 1893-ին կամ 1894-ին նա հրավիրվել է Թիֆլիս՝ տեղի Խոջիվանքի գերեզմանատանը Րաֆֆու մահարձանը կանգնեցնելու համար: Սակայն ինչ-ինչ պատճառներով շուտով հրաժարվել է պատվերից և հետ վերադարձել:

Մեծ հույսեր են կապել Հակոբ Փափագյանի աշակերտ՝ Զմյուռնիայում ծնված, 1914-ին Օսմանյան բանակ զորակոչված և Իրաքի անապատներում զոհված երիտասարդ արձանագործ Զարեհ Բեյուքյանի (1890-1917) հետ: Հայաստանի ազգային պատկերասրահում է պահվում նրա պորտրետային աշխատանքներից մեկը՝ նկարիչ Ռաֆայել Շիշմանյանի դիմաքանդակը:

Վերոհիշյալ քանդակագործներից բացի հայտնի են նաև Տիրուհի Կիվմիշյանի, Ավետիս Ամպարաճյանի, Արմենակ Գուլանճյանի, Հակոբ Պեգիրճյանի, Հրանտ Բենդերի (Բենդերյան, 1876-1927-ից հետո), Գևորգ Գափամաճյանի (1880-1906) և այլոց անունները: Ինչ վերաբերում է Խարբերդում ծնված Նշան Թուրին (Թուրունճյան, 1888-1967) կամ Կ. Պոլսի Գեղարվեստից վարժարանում ուսանած Արա Սարգսյանին (1902-1969), ապա նրանց արվեստը ձևավորվել ու հասունացել է ավելի ուշ. մի դեպքում՝ ֆրանսիական և ամերիկյան, իսկ մյուս դեպքում՝ սովետահայ իրականության պայմաններում:

#### ARMENIAN SCULPTORS IN THE OTTOMAN EMPIRE

Aghasyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Arts,  
Armenia)